Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ | Պարտատոմսեր | Ֆյուչերսներ



Բարձրանում ենք միասին

20 Ապրիլ 2025

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծություն՛ը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ

Նախորդ շաբաթ ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:



Տոկոսադրույքի իջեցման սպասումները աճում են:



Նախորդ շաբաթ տեխնոլոգիական ոլորտը աճեց ավելի քան 8%-ով:

Պարտատոմսերի շուկան արձանագրեց բացասական եկամտաբերություն:

Նախորդ շաբաթ S&P500-ը աճեց 4.52%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը աճեց 6.18%-ով

Նախորդ շաբաթ Dow Jones-ը աճեց 3.17% -ով

Նախորդ շաբաթ Russell 2000-ը աճեց 5.54%-ով





Տոկոսադրույքի իջեցման սպասումներ

Ուրբաթ տոկոսադրույքի նվազեցման սպասումները կտրուկ աճել են՝ այս տարի տոկոսադրույքի մեկ անգամ իջեցման հավանականությունն այժմ 70% է, բայց դեռևս զգալիորեն ավելի ցածր մակարդակում են, քան պատերազմի սկսվելուց առաջ էր:

Ինդեքսներ

ԱՄՆ հիմնական բաժնետոմսային ինդեքսների դինամիկան

- Նախորդ շաբաթ ԱՄՆ բոլոր հիմնական ինդեքսները արձանագրեցին դրական եկամտաբերություն:
- Nasdaq-ը և փոքր կապիտալիզացիայի բաժնետոմսերը ցույց տվեցին ամենամեծ աճը (-8%-ից մինչև +6%):
- S&P 500-ը փետրվարի 27-ից հետո բարձրացել է ավելի քան 3%-ով և հետ է բերել իր կորուստները:
- Dow Jones արդյունաբերական միջինը շաբաթ փակեց դրական միջակայքում, սական ավելի զուստ արդյունքներով:

Փառահեղ յոթնյակ

Goldman Sachs-ի վերլուծաբանները նշել են, որ Փառահեղ յոթնյակի ինդեքսը մարտի 27-ից ի վեր չի նվազել, այդ ընթացքում այն աճել է 19%-ով):



Ոլորտներ

Նախորդ շաբաթ տեխնոլոգիական ոլորտը արձանագրեց ամենաբարձր արդյունքները, մինչդեռ էներգետի կոլորտը արձանագրեց ամենախորը անկումը:

Բաժնետոմսերի շուկա | 1-ին եռամսյակի հաշվետվություններ

Taiwan Semiconductor Manufacturing-ը (TSM) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 35.9 միլիարդ ԱՄՆ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 35%-ով ավելի է, ինչը արտացոլում է առաջադեմ տեխնոլոգիաների և արհեստական բանականության կիրառությունների համար նախատեսված չիպերի մեծ պահանջարկը: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 3.49 ԱՄՆ դոլար, որը գերազանցել է սպասումները՝ պայմանավորված բարձր արդյունավետությամբ հաշվարկային համակարգերի պահանջարկով և առաջադեմ տեխնոլոգիաների ակտիվ տարածման:

JPMorgan Chase-ը (JPM) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 50.5 միլիարդ դոլարի հասույթ, ինչը տարեկան մոտ 10%-ով ավելի է և պայմանավորված է ներդրումային բանկային գործունեության և զուտ տոկոսային եկամտի բարձր ցուցանիշներով: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը գերազանցել է սպասումները՝ հասնելով 5.94 դոլարի, ինչը պայմանավորված է ռեկորդային եկամուտներով և մակրոտնտեսական անորոշության պայմաններում հաճախորդների ակտիվությամբ:

Բաժնետոմսերի շուկա | 4-րդ եռամսյակի հաշվետվություններ

Johnson & Johnson-ը (JNJ) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 24.1 միլիարդ դոլարի հասույթ, որը տարեկան մոտ 10%-ով ավելի է, ինչը արտացոլում է դեղագործական հատվածի, մասնավորապես՝ ուռուցքաբանության և իմունոլոգիայի ոլորտներում ուժեղ աճը: Մեկ բաժնետոմսի հաշվով շահույթը կազմել է 2.70 դոլար՝ գերազանցելով սպասումները՝ դեղերի վաճառքի բարձր մակարդակի և բժշկական տեխնոլոգիաների բիզնեսում շարունակական աճի շնորհիվ:

ASML Holding-ը (ASML) 2026 թվականի առաջին եռամսյակում ստացել է 9.5 միլիարդ դոլարի հասույթը, որը տարեկան մոտ 17%-ով ավելի է, ինչը արտացոլում է EUV լիտոգրաֆիկ համակարգերի նկատմամբ մեծ պահանջարկը: Մեկ բաժնետոմսի դիմաց շահույթը կազմել է 7.7 դոլար, որը գերազանցել է սպասումները, ինչը պայմանավորված է բարձր շահութաբերությամբ և կիսահաղորդչային սարքավորումների նկատմամբ պահանջարկի շարունակական աճով:

1 Day	1 Week	1 Month	3 Months	6 Months	1 Year	5 years	Max
-0.15%	-1.79%	-1.31%	+7.10%	+21.20%	+48.71%	+44.34%	+16.75K%

1 Day	1 Week	1 Month	3 Months	6 Months	1 Year	5 years	Max
+3.47%	-1.25%	+7.72%	+7.45%	+41.83%	+128.04%	+126.08%	+1.50K%

Պարտատոմսերի շուկա

Այս գրաֆիկը ցույց է տալիս ԱՄՆ պետական պարտատոմսերի եկամտաբերության դինամիկան՝ տարբեր ժամկետայնության պարտատոմսերի համար՝ 2, 5, 7, 10 և 30 տարի:

Նախորդ շաբաթ ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց (գները աճեցին): Միայն ուրբաթ նվազելով 8-10 բազային կետով:

Մետաղներ

Նախորդ շաբաթ բոլոր մետաղների գները բարձրացան, իսկ արծաթը առաջատարն էր:

Դոլարի ինդեքս

Դոլարը երրորդ շաբաթն անընդմեջ անկում է գրանցում՝ ջնջելով պատերազմի սկզբից կուտակած աճը:

Ոսկի

Ուրբաթ ոսկու գինը բարձրացավ մինչև 4900 դոլարի մակարդակին:

Բնակարանային շինարարության ոլորտ

Բնակարանային շինարարության ոլորտի զամբյուղը, մարտին գրանցված անկումից հետո, ցույց տվեց մասնակի վերականգնում:



Նավթ

WTI հում նավթի գինը պատերազմի սկզբից ի վեր իր գագաթնակետից նվազել է 70%-ով և հունվարի սկզբից ի վեր առաջին անգամ վերադարձավ իր 50-օրյա սահող միջինին:

Կրիպտոարժույթներ

Շաբաթվա վերում Բիթքոյնի գինը կտրուկ աճեց՝ գերազանցելով 78,000 դոլարը՝ փետրվարի 2-ից ի վեր առաջին անգամ:

Հետաքրքիր փաստեր

Զարգացող շուկաները համաշխարհային ոսկու պահանջարկի հիմնական շարժիչ ուժն են.

Վերջին 10 տարիների ընթացքում զարգացող շուկաները կազմել են համաշխարհային ոսկու պահանջարկի 70%-ը: Չինաստանը կազմել է համաշխարհային պահանջարկի 27%-ը, որը ցանկացած տարածաշրջանի ամենամեծ մասնաբաժինն է, որին հաջորդում է Հնդկաստանը՝ 21%-ով: Արդյունքում, այս երկու երկրները կազմում են համաշխարհային ոսկու ընդհանուր պահանջարկի գրեթե կեսը: Համեմատության համար, Հյուսիսային Ամերիկան և Եվրոպան, ներառյալ Ռուսաստանը, կազմել են համապատասխանաբար ընդամենը 11% և 12%: Աֆրիկան ոսկու մատակարարման ամենամեծ աղբյուրն է՝ 26%-ով, որին հաջորդում են Ասիան՝ 19%-ով, Կենտրոնական և Հարավային Ամերիկան՝ 15%-ով, և Հյուսիսային Ամերիկան՝ 14%-ով:

Figure 2: Demand and supply are geographically diverse

Regional breakdown of gold demand and supply*



*Based on 10-year average demand estimates ending in 2025. Includes jewellery, bars, coins, ETF demand, and technology demand. Excludes over-the-counter transactions and central bank purchases. **Based on 10-year average supply estimates ending in 2024. Regional supply breakdown includes mine production only. Developed and emerging market categorisations are taken from the IMF World Economic Outlook.

Source: IMF, Metals Focus, World Gold Council

Հետաքրքիր փաստեր

ԴՊՀ-ն (Դաշնային պահուստային համակարգ) 2025 թվականին ունեցել է 18.7 միլիարդ դոլարի գործառնական վնաս, որը նրա երրորդ անընդմեջ տարեկան վնասն է: Երեք տարվա ընթացքում ընդհանուր վնասը հասնում է 210.3 միլիարդ դոլարի: Կորուստները հիմնականում պայմանավորված են նրանով, որ ԴՊՀ-ն բանկերին և դրամական շուկայի ֆոնդերին վճարում է ավելի շատ տոկոսներ, քան վաստակում է իր պարտատոմսերից և հիփոթեքային արժեթղթերից:
Այնուամենայնիվ, ԴՊՀ-ն չի կարող դառնալ անվճարունակ, քանի որ բառացիորեն ստեղծում է իր սեփական փողը:

Հետաքրքիր փաստեր

Սմարթֆոնների համաշխարհային շուկան պատմական անկում է ապրում.

IDC-ն (International Data Corporation) կանխատեսում է, որ 2026 թվականին սմարթֆոնների համաշխարհային առաքումները տարեկան կտրվածքով կնվազեն 13%-ով կամ 160 միլիոն միավորով՝ հասնելով մոտավորապես 1.1 միլիարդի: Սա կտրուկ անկում է 2025 թվականի 2%-ի և 2024 թվականի 6%-ի աճի համեմատ: Անկումը պայմանավորված է հիշողության չիպերի աննախադեպ պակասով, որը բարձրացնում է բաղադրիչների արժեքը ամբողջ ոլորտում: Անցյալ տարի առաքվել է մոտ 170 միլիոն սմարթֆոն, որոնց գինը 100 դոլարից ցածր էր: Կանխատեսվում է, որ չիպերի դեֆիցիտը կշարունակվի մինչև 2027 թվականի կեսերը,

Էժան սմարթֆոնների արտադրությունը վերանում է:



Հետաքրքիր փաստեր

2026 թվականի Մարտի 30-ին դրությամբ S&P 500 ինդեքսը 7%-ով անկում ապրեց՝ գրանցելով պատմության մեջ տարվա 12-րդ վատագույն սկիզբը: Սակայն այժմ S&P 500-ը տարեկան աճ է գրանցել 4.5%-ով՝ գերազանցելով այս փուլում տարեկան միջին ցուցանիշը 3%-ով:



Հետաքրքիր փաստեր

S&P 500-ը գտնվում է բոլոր ժամանակների ամենաբարձր մակարդակի վրա, մինչդեռ սպառողների տրամադրության ինդեքսը՝ գտնվում է բոլոր ժամանակների ամենացածր մակարդակի վրա: Մենք երբեք չենք տեսել այսպիսի հսկայական տարբերություն Ուոլ Սթրիթի և սովորական քաղաքացիների միջև:



ԱՄՆ տնտեսական օրացույցը

Այս շաբաթ 299 ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի առաջին եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Tesla (TSLA), Intel (INTC), The Procter & Gamble (PG), Lam Research (LRCX), UnitedHealth Group (UNH), Philip Morris (PM), Boeing (BA), Blackstone (BX) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվություններիը:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	Market Cap	P/E
1	TSLA	Tesla Inc	Consumer Cyclical	Auto Manufacturers	USA	1503.30B	372.32
2	INTC	Intel Corp	Technology	Semiconductors	USA	343.94B	-
3	PG	Procter & Gamble Co	Consumer Defensive	Household & Personal Products	USA	341.47B	21.77
4	LRCX	Lam Research Corp	Technology	Semiconductor Equipment & Materials	USA	334.17B	54.84
5	GE	GE Aerospace	Industrials	Aerospace & Defense	USA	317.76B	37.37
6	UNH	Unitedhealth Group Inc	Healthcare	Healthcare Plans	USA	294.66B	24.60
7	GEV	GE Vernova Inc	Industrials	Specialty Industrial Machinery	USA	270.27B	56.37
8	RTX	RTX Corp	Industrials	Aerospace & Defense	USA	264.38B	39.58
9	PM	Philip Morris International Inc	Consumer Defensive	Tobacco	USA	245.92B	21.72
10	IBM	International Business Machines Corp	Technology	Information Technology Services	USA	237.76B	22.74
11	AXP	American Express Co	Financial	Credit Services	USA	227.47B	21.56
12	SAP	Sap SE ADR	Technology	Software - Application	Germany	211.58B	25.66
13	TXN	Texas Instruments Inc	Technology	Semiconductors	USA	209.24B	42.20
14	TMO	Thermo Fisher Scientific Inc	Healthcare	Diagnostics & Research	USA	195.70B	29.69
15	NEE	NextEra Energy Inc	Utilities	Utilities - Regulated Electric	USA	191.81B	27.87
16	T	AT&T, Inc	Communication Services	Telecom Services	USA	185.13B	8.69
17	BA	Boeing Co	Industrials	Aerospace & Defense	USA	175.54B	117.82
18	ISRG	Intuitive Surgical Inc	Healthcare	Medical Instruments & Supplies	USA	166.65B	59.57
19	BX	Blackstone Inc	Financial	Asset Management	USA	157.77B	33.38
20	UNP	Union Pacific Corp	Industrials	Railroads	USA	149.10B	20.96

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

TIME (ET)	REPORT	PERIOD	ACTUAL	MEDIAN FORECAST	PREVIOUS
MONDAY, APRIL 20					
	None scheduled				
TUESDAY, APRIL 21					
8:30 am	U.S. retail sales	March		1.5%	0.6%
8:30 am	Retail sales minus autos	March		1.4%	0.5%
10:00 am	Business inventories	Feb.		0.3%	-0.1%
10:00 am	Pending home sales	March			1.8%
WEDNESDAY, APRIL 22					
	None scheduled				
THURSDAY, APRIL 23					
8:30 am	Initial jobless claims	April 18		210,000	207,000
9:45 am	S&P flash U.S. services PMI	April		--	49.8
9:45 am	S&P flash U.S. manufacturing PMI	April		--	52.3
FRIDAY, APRIL 24					
10:00 am	Consumer sentiment (final)	April		49.0	47.6

AraratBank

060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am